

ՀԱՅ ՊԵՏԱԿԱՆ ՈՎԵՐԱ


ԼԻԲՐԵՏՈ № 1

# ԱԼՄԱՍ

ՈՎԵՐԱ ԶՈՐԸ ԿՈՐՎՈՎՈՒԹՅԱՆԴ

ՅԵՐԱՔԵՑՑՈՒԽԹՅՈՒՆ  
Ա. Ա. ՍՊԻՇԻՆ Ա. Բ Յ Ա Ն Ի  
ԼԻԲՐԵՏՈ Ա. ՊԵՐՆՈՎԻ ՀԱՅ  
ՀՈՎ. ԹՈՒՇԱՆՑԱՆԻ «ԹԱՐ-  
ԿԱԲԵՐԴԻ Ա.Ո.ՈՒ.ՄԸ» ՊԱՆԻ  
ԹԱՐԴԱ. Տ. ՀԱՅՈՒՄՑՈՂԻ

ՅԵՐԱՔԵՑՑՈՒԽԹՅՈՒՆ ՏԵՍԱ-  
ԹՑՈՒՆ. ՅԵՎ. ՀԱՄԱՍԱՑ ԲՈ-  
ՎԱՆ ԳԱԿՈՒԽՈՅՈՒՆ. Ա. ԹԵՐ-  
ԼԵՄՑՑՈՅՈՒՆ



25 DEC 2017



ԱԼ ԵԳՍԱՆԴՐ ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆ



334

Գետիշտան և կալան գրադես 8923 պատվիր 2209 տիրամ 2000

## ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆ

(1871-1928)

«Ալմաս» սպիրայի Հեղինակն Ալեքսանդր Սպենդիարյանը ծնվել է 1871 թվի հոկտեմբերի 20-ին, Տավրիկյան նահանգի Կախովկա գյուղաքաղաքում։ 1890 թվականին ավարտում է Սիմֆերովուր քաղաքի դիմումին։ Աշակերտության մաջնում, Սպենդիարյան սկսում է ջութակի և դաշնամուրի զաներ վերցնել։ Մի քանի տարի անց, նույնում է յերաժշտական մաքր ժանրի մի քանի յերկիր, տուանձնաւում մարչեր և պարյեղուակներ։

Դիմնադիման ավարտելուց հետո, Սպենդիարյանն ընդունվում է Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետ, վորն ավարտում է 1896 թվին։ Այդ ժամանակամիջոցում նա յերաժշտության տեսության գումար և վերցնում է մասնակի սուեզադադում։ Հետագայում այդ յերկերն Սպենդիարյանը ցուց է տալիս ուսուականական լոր կոմպոզիտոր և տեսաբան Ռիմսկի Կորսակովին, վորը համաձայնում է նրա հետ պարագել։ 1900 թվին Սպենդիարյանն ավարտում է Գետերբաւրդի կոնսերվատորիան։ Հեղինակի ավարտական ուսուցառությունը և մի շարք ուրիշ յերկեր արժանանում են Գլիմկայի մրցանակին։ Հայունիք վերաբանագուց հետո, Սպենդիարյանն սկսում է մեծապես հետաքրքրվել հատկապես թաթարական

ժողովրդական յերդերով։ Ինչպիս թաթարական, այնպիս ել բարձաթիվ այլ աղոռոթյունների ժողովրդական տարբեր նկարագիր ունեցող մոտիվները հակայական նյութ են տալիս Սպենդիարյանի ստեղծագործություններին։

1924 թվին Սպենդիարյանը տեղափոխվում է Յերևան։

Յերաժշտական դոծունելյության 25-ամյակի առթիվ, 1926 թվի հոկտեմբերի 3-ին, Խորհրդային Հայաստանի կառավարությունը Սպենդիարյանին տալիս է հանրապետության ժողովրդական կոմպոզիտորի կոչում։

Ալեքսանդր Սպենդիարյանը վախճանվեց 1928 թվի մայիսի 7-ին Յերևանում՝ թոքերի թաղանթախտային բորբոքումից։

Ժողովրդական կոմոդոգիտորը թաղվեց ժողովրդական տան այգում։

ՆԱԴԻՐ ՇԱՀ — բաս

ԹԱԹՈՒԼ, հայ իշխան — բարիտոն

ԻՇԽԱՆՈՒՅՆԻ ԱԼՄԱՍ, նրա կինը — դրամատիքան սոսպրանո

ՇԵՑԻՆ — տենոր

ԲՈՒԲԵՆ — թաթուլի ընկերը — բաս

ԳԱՅԱՆԵ, իշխանուհու նաժիշտը — մեցոս սոպրանո.

ԾԱՂԲԱՌՈՒ, թաթուլ իշխանի պալատում — բարիտոն

ՊԱՌԱՎ, գուշակող կին — կոնտրալտո

ՊԱԼԱՏԱԿՅԱՆ, ՅԵՐԳԻՉ (աչուղ) — տենոր.

ԲԱԴՐԱՄԹԻԿ զորավարներ, թիկնապահներ, պարողներ, յերգիչներ :

## «Ա Լ Մ Ա Ս»

ՈՊԵՐԱ ԶՈՐԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՄՔ

Խորհրդային Հայաստանի հանրապետության Ժողովրդական կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանը մեր յերաժշտության պատմության մեջ բաց արեց մի նոր եղանակ՝ Շնորհիվ իր տաղանդի և յերաժշտական գիտության, նա այդ արվեստի համար ապահովեց վորակական նորանոր ցուցանիշներ։ Սպենդիարյանն առաջին հայ կոմպոզիտորներից մեկն եր, վոր սկիզբ դրեց ու զարգացրեց մեր ինստրումենտալ յերաժշտությունը։

«Ալմաստ» ոպերայի նյութը հանդիսանում է Հռվիամնես Թումանյանի «Թմբկաբերդի առում» պոեման։

«Ալմաստ»-ի նախնական աշխատանքներին Սպենդիարյանը ձեռնարկել է 1915—16 թվականներին։ Հիմնական աշխատանքը կատարված է 1924 թվից սկսած։

Մինչև իր մահը, հեղինակն «Ալմաստ»-ում կատարում է սկզբունքային փոփոխություններ և սրբադրություններ։ Սպենդիարյանի մահվան հետևանքով, ոսկերայի չորրորդ գործողության որկեսորովկան կատարել է կոմպոզիտոր Մաքսիմիլյան Շտայնբերգը, իմբրագրելով միաժամանակ վողջ պարտիտուրան։

«Ալմաստ»-ն առաջին ամրամ բեմադրվեց Մոսկվայում (1930 թվին), Ողեսայում (1931 թվին), Թիֆ-

լիսում (1932 թվի, մայիսի 21-ին), իսկ Յերեանում  
1933 թվի հունվարի 20-ին:

«Ալմատ»-ը Սպենդիարյանի վերջին և ամենախո-  
շոր յերաժշտական գործն է: Այս ոպերան վորակա-  
կան մի փայլում նվաճում է վոչ միայն Սպենդիարյանի  
արվեստի համար, այլ նաև մի եղ և բաց անում մեր  
յերաժշտության պատմության մեջ: «Ալմատ»-ը  
Սպենդիարյանի զլամակոր յերկերից մեկն է, արդյունք  
կոմպոզիտորի յերկար տարիների փորձի յերաժշտա-  
կան կուլտուրայի մարզում:

Ամենախոշոր նվաճումն «Ալմատ»-ում ինստրու-  
մենտալ արվեստի հաղթանակն է: Որկեստրովկայի  
բնադաշտում նկատվում են վորակական ցուցանիշնե-  
րի և կուլտուրական դիրքերի նոր տիրապետում: Իսկ  
սա նոր վորակ և Սպենդիարյանի ստեղծագործության  
մեջ: «Ալմատ»-ի որկեստրովկան հարուստ է, բազ-  
մերանգ և չափազանց որիգինալ, վորի միասնակա-  
նությունը խոշոր չափով նույասում է՝ նրա նույրը  
ներլաշնակությունը: Մեր ինստրումենտալ յերաժշ-  
տության պատմության մեջ, «Ալմատ»-ի որկես-  
տրային մասը, մինչև հիմա յել մնում է յերակի: Ապերայի ընհանուր վոճը Ռիմսկի-Կորսակովի ստեղ-  
ծաղործական սկզբունքների կիրառումն է:

Ահա հակիքը կերպով «Ալմատ»-ի ինստրումեն-  
տալ, որկեստրային մասի մեր բնորոշումը:

Մի քանի խոսք վոկալի մասին: Բազմիցս նշել ենք,  
վոր Սպենդիարյանի դրոշ յերաժշտական ժառանգու-  
թյան մեջ վոկալ արվեստն իր վորակական ցուցա-  
նիներով չի հավասարվում արվեստադետի սիմֆոնիկ  
կուլտուրային: Այդ թերությունն ակնբախ է նաև «Ալ-

մատ»-ում: Վերսչիչյալ ոպերայում վոկալի ամենա-  
խոչոք նվաճումը հանդիս է գալիս դլխավորապես խըմ  
բական յնըզերի մակուլժների մեջ: Հեղինակի վոկալ  
արվեստում սա նոր վորակ և անշուշտ: Հատկապես  
ովթմիական տեսակետից նկատվում են հետաքրքի-  
ր մամենակար: Այն խմբական յերգերը, վորոնց հիմքը  
կազմում են հայկական ժողովրդական մոտիվներ, հե-  
ռու յեն ընդհանուր շարլոնից, ահա թե վորտեղ պիտի  
վորոնել նրանց գեղարվեստական արժեքը, ժողովրդա-  
կանությունն ու հաջողության զարգությունը: Եռյինը կա-  
րող ենք ասել նաև պարյեզանակների մասին, ուր նը-  
կառվում է Սպենդիարյանի որիթնեց ոգավելու վիր-  
տուողությունը: Պրիմիտիվ ուղարքեղանակները հեղի-  
նակի վարպետ որկեստրովկայի չնորհիվ, սաացել են  
բազմելանդ և գունեղ կերպարանք:

Սակայն նույնը չենք կարող ասել «Ալմատ»-ի վո-  
կալ մյուս համարների մասին:

Վերսչիչյալ ոպերայի գլխավոր դեմքն՝ Ալմատը,  
վորպես յերաժշտական տիպ, ամբողջացած չե: Հոգե-  
կան իր ապրումներն ու փոթորկումները դրսերելու  
համար հերսոնին չունի յերաժշտական ցրիվ ձեա-  
կերպում: Իր դիրի և խաղի բերումով, նաև պետք և յե-  
րաժշտական խոսքի տեսակետից ավելի պարզ և վորո-  
չակի հանդիս գալ: այն ինչ կոմպոզիտորի մոտեցումը  
և ստեղծադործությունը Ալմատի վերաբերմայք յե-  
ղել և ժլատ:

Սպենդիարյանի վոկալ յերաժշտությունը ժլատ և  
յեղել նաև նաի նկատմամբ: Հատկապես առաջին  
գործողության մեջ, պարսկական բանակի պարտու-  
թյան մամենակար: Շահը գործողությունից ներքին ան-

գիմադրելի բարկությունից խեղդվում և և ուզում և  
այդ բոլորն արտահայտել, կոնկրետացնել յերաժշտա-  
կան ուժեղ դրամատիկ պատկերների և գույների մի-  
ջացով, սակայն այդ խոսքած չետքերը բացակայում  
են:

Նույնպիսի գրության մեջ և մասամբ նաև իշխան  
Թարուլը: Նրա հաղթանակները յերաժշտականորեն  
չեն հիմնավորված զո՞չ մի խորացրած յեղանակով:

Ահա մոտավորապես այն հիմնական բացերը, վո-  
րոնք աչքի յն ընկնում «Ալմաստ»-ի վոկալ մասում:

«Ալմաստ»-ի յերաժշտական հիմնական տարրերը  
կազմում են հայկական և պարսկական մոտիվները:  
Հայկական մոտիվներից առավելագույն մշակության են  
յենթարկվել ժողովրդական յերգեր և պարյեղանակ-  
եր, իսկ պարսկական յերաժշտությունից գլխավորա-  
պես ոդտագործվել են կլասիկ մոտիվներ:

Առևելյան մելոդիայի և պարսկական յեղանակնե-  
րի, ինչպես նաև սշուղական յերգի վերամշակումը  
Սպենդիարյանի մոտ, նրա «Ալմաստ» ոպերայում, չի  
դրսերված մեխանիկորեն: Նա ունի իր յերաժշտա-  
կան-գեղարվեստական պատճառաբանություն և ստեղ-  
ծագործական ներքին կառուցվածքի տեսակետից կազ-  
մում և մի որդանական միասնություն:

«Ալմաստ»-ը վորպես ոպերա, իրեւ յերաժշտական  
ստեղծագործություն, հեռու յե պատմական, արդեն  
խոշոր տրադիցիա ունեցող ոպերային արվեստի ընդհա-  
նուր վոճից: Այստեղ բացակայում և հին ոպերաների  
բանալ շտամպը: Սրա փոխարեն վերոհիշյալ ոպերայում  
մենք տեսնում ենք ստեղծագործական նոր մեթոդների  
և ձեռքի կիրառում:

«Ալմաստ»-ն իր բնույթով, իր ստեղծագործական  
ներքին կառուցվածքով և պրինցիպներով, իր գեղար-  
վեստական արժանիքներով, միաժամանակ սրայքար և  
ուղղված այն ոպերային ստեղծագործությունների-  
դեմ, վորտեղ այնքան բացահայտ կերպով հանդես է  
գալիս արևելյան յերաժշտության դիլետանտական վո-  
ճակորումը: Իսկ այսպիսի նշումներ յերաժշտության-  
պատմության մեջ չատ կան: Թե՛ անցյալում և թե՛  
ներկայում մի չարք որինտալիստ կոմպոզիտորներ-  
ինց ոպերաներում ոգտագործելով արևելյան մելո-  
դիան, չկարողացան և չեն կարողանում այդ մելո-  
դիան մերել իրմաց սեփական նիմունների հետ: այդ  
պատճառով ել ահա վերոհիշյալ տիպի աշխատու-  
թյունների մեջ բացակայում և որգանական ամբողջա-  
կանությունը: Գրանք ավելի շուտ մեխանիկական վե-  
րաբարդություններ են՝ զուրկ յերաժշտական և գե-  
ղարվեստական արվեստից: Ստեղծագործության այս-  
պիսի ձևակերպում կարելի յե վորակել և բնորոշել իբ-  
րևել արևելյան յերաժշտության գիշետանտական վո-  
ճակորում:

Հայկական և պարսկական մելոդիաների վերա-  
մշակումներից բացի, «Ալմաստ»-ում մենք տեսնում ենք  
ետնոգրաՓիկ և ուչիտատիվ արվեստի միացման առա-  
ջին փորձը մեր յերաժշտության մեջ: Այստեղ արդեն  
հեղինակն իր նպատակին չի հասել և առաջազրված  
ինտիբուր դրական իմաստով չի լուծվել: Ունչիտատիվի և  
ետնոգրաՓիկ նյութի միացումը չի հիմնավորված և չի  
պատճառաբանված: Նրանք հանդես են դալիս իրեւ ան-  
ջատ, միմյանցից անկախ յերաժշտական կատեգորիա-  
ներ: Սա «Ալմաստ» ոպերայի հիմնական բացն է:

Ալեքսանդր Սպենդիարյանի «Ալմաստ»-ը շուշի այն էին ոպերաների արագիցիաները, չտամպն, ուր իշխող հանդիսանում և արիաները։ Հատկապես խոռալական ոպերաների սենտիմենտալ արիաներից զուրկ և «Ալմաստ»-ը։ Սա անշուշտ խոչըսր նվաճում և։ Արիաների փոխարեն Սպենդիարյանը յերաժշտության մեջ, ինչպես նշեցինք, «Ալմաստ ստեղծագործութայն միջոցով մտցնում և սենտիոնալիքը, ամբողջ ոպերայում տեղ տալով միմիայն Աշուղի արիային։

«Ալմաստ»-ում վերամշակության, ազնվացման յենթարկելով և տնօղբարիքի նյութը, Սպենդիարյանը խստագույն մոռեցում և հանդես բերում դեպի արդ մատերիալը, կովելով ողբիմիտիվիզմի դեմ։ Իսկ այդ, պրիմիտիվութիւն հաղթահարման համար, հեղինակը դիմել և յերաժշտության ամենակուլտուրական և հզոր զենքին—սիմֆոնիզմին։

«Ալմաստ»-ի գլուխոր արժանիքներից մեկն ել սինթեզի խնդրի ճիշտ լուծումն և։ Այդ հանդես և յեկել Սպենդիարյանի հին աշխատությունների մեջ, իսկ «Ալմաստ»-ում նա զտել և իր լրիվ ձևվակերպումը։

### ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՎԱԿԹՅՈՒՆ

Յաղիբը Շահի զորքերը շրջապատել են թմրիաւորդը։ Կովկը տելում է 40 որ։ Բազմի կաշտում շահի զորքերը պարտություն են կրում։ Նա զայրանում և սպառնում։ Զորավարները նաղիբը Շահին խոռանում են հարձակման անցնել և զրավել թմրկարերդը։ Հենց այդ ժամանակ, օրատերարձի դաշտից յեկող ուորհանգակը հաղորդում և, վոր պարսկական բանակում պատերազմի դեմ գժողովություններ կան։ Նաղիբը Շահը դիմում և խորամանկ ու փորձառու Շեյխի խորհուրդին։ Վերջինս առաջարկում է զրավել թաթուէկինով՝ Ալմաստի սիրտը, խոստանալով նրան իշխանություն և փառք։

### ԵԵՑԽԵ ՅԵՐԳԸ

Հզոր հերոսին քաջն ել ինչ կանի  
թե չլինին կինն ու գինին։

Արե մի շող շող ճակատը պայծառ  
Նայում և հողարտ, ինչ բարձր մի սար,  
Նրան ով և գետին անելու Հավասար,  
թե չլինին կինն ու գինին։

Պարում և ասես կոխվ զնալիս  
Թուշում և գետից վերև ման գալիս,  
Եղ ո՞վ նրան ցաց կը բերի թոչելիս,  
թե չլինին կինն ու գինին։

Թեկուղ և արար աշխարհ մրան դան,  
Կերթա դեմ՝ ու դեմ պուր չի տալ իրան,  
Յեւ ինքը նուռահմն ել հաղթող չի նրան,  
թե չլինին կինն ու գինին։

Համանություն տալով Շերիխի խորհրդին, Շահը  
պալատական յերիտասարդ յերգչին սուաջարկում է  
ծեր աշուղի կերպարանքով Թմբկաբերդ մտնել, զրա-  
վել Ալմաստի սիրու և դավաճանությամբ բերդը ձեռք  
բերել:

### ՅԵՐԿՐՈՐԴԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Իշխան Թաթուլի պալատում: Հայ աղջիկները  
պատշտամբում նստած աշխատում են և դառնագին  
յերգեր յերգում: Ալմաստն իր նաժիշտ Գայանեյի ու-  
ղեցությամբ դիտում է հեռավոր մարտը: Վերջինս  
Ալմաստին պատմում է դիշերային նրա զառացանքի  
ժամանելու: Իշխանուհու պահանջով Գայանեն յերգվում է  
մոռանալ այդ յերազն ու զառանցանքը: Հենց այդ պա-  
հին աղջիկները հաղորդում են Թաթուլի մի նոր հաղ-  
թության լուրը: Ալմաստը դիտում է պատերազմի հաղ  
թուկան տեսարանը և զղջում, վոր անգամ մի պահ կա-  
րողացել և ըմբռստանալ իր Թաթուլի դեմ: Սակայն  
որպես մանուկ վհուկ պառավիր նրա մեջ նորից փառ-  
քի տեսչ և զարթեցնում: Մրան հաջորդում է ծեր ա-  
շուղի մուտքը: Վերջինս լարում է իր սազը և սկսում  
իշխանուհու գովքն անել:

### ԱՇՈՒՂԻ ՅԵՐԳԸ

Դուլ արեց յերգչին՝ հնչյուն սազովն իր, շող  
պատկերը քո:  
Շիրսովի վարդի անմար նազովն ե, շող պատկերը քո:  
Զոր, դիշեր, հոգի ու սիրտ մաշող ե, շող պատկերը քո  
ինչ Ալմաստ ու լալ՝ յերկնի մի շող ե, շող  
պատկերը քո:  
Տիրուհի, աշխարհն արար հմայել ես, վեհ ես ով  
աննպարտ  
Նազաշի ճարտար գրչին վայել ե՝ դեմքդ ծով հապատ  
բեղ համար իմ տերն արե պահել ե թազն իր  
ակնազարդ  
Ամենին անհուր բոցով հաշող ե շող պատկերը քո:

Ո՛, նայի՛ր արքան հզոր ընդմիշտ և քեզ դարձել զերի,  
Շահ լինի թե սովաճար դերպիշ մի զուլ և հետքերիդ.  
Ա՛զ կարող ես արեփել գուր վիշտը հուր քու աչերից  
Յերկանչող ուժով խավար ու շող մաշող ե շող  
պատկերը քո:

Ալմաստը ցնորդների մեջ և ընկնում: Այդ ժամա-  
նակ հայ աղջիկները լուր, են բերում, վոր Թաթուլ  
իշխանը պատերազմից հաղթանակորեն վերադառնում  
է: Ներս և մտնում Թաթուլը: Ալմաստը մի պահ  
ցնորդների մեջ ընկած, գտնում է իրեն և նետվում  
իշխան Թաթուլի գերկը:

### ՅԵՐՐՈՐԴԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Թաթուլի պալատում հաղթանակի խնճույք է:  
Ալմաստը ընկել և ցնորդների մեջ: Թագուհի դառնա-  
լու միտքը չարչարում և նրան: Նա բոլորին առաջար-  
կում և լեցնել բաժակներն ու խմել: Խմում են ու պա-  
րում: Ալմաստն այլևս անզոր և դիմադրել իր հանցա-  
վոր կրքերին: Նրա հանճնարարությամբ Գայանեն և  
աղջիկներն անընդհատ զիմի են մատուցում ուղաքի  
դաշտից յեկածներին: Ալմաստի սուաջարկով կանայք  
նորից սկսում են պարել սրան հաջորդում և տղա-  
մարդկանց պարը, վորի ընթացքում պարողները գի-  
նու աղջիցության տակ ընկնում են ու քնում: Այդ  
վիճակին և յենթարկվում նաև Թաթուլը: Ոգովելով  
հարմար առիթից, Ալմաստը զնում և բերդի դուռը  
բանալու: Գայանեն փորձում և նրան հետ կանգնեցնել  
այդ մատադրությունից: Կարճ կովից հետո, Ալմաստը  
գունակով սպանում է իր նաժիշտին: Ապա իշխանուհին  
բերդի դուռները բաց ե անում և նազիր Շահը իր բանա-  
կով մտնում և Թաթուլի պալատը:

Նազիր Շահը Թաթուլի զաճի վրա առաջ առաստին և սպասում: Նա յերգում և աշխարհի և փառքի ունայնության մասին: Պալատական յերգիչը խոնարհ կանգնած է Շահի մաս: Յերեսում է Ալմաստը, վորն արդեն հասկացել է թե ամեն ինչ ցնորք է յեղիլ, յերազ, վոր իբրև խափել են: Նա մերժում է Շահի փայտայներները և հայտարարում, վոր յերբեք վոտք չի գնելու Շահի հարեմը: Ապա դաշտած հարձակվում է Շահի վրա սպանելու մտադրությամբ, ոտկայն անհաջող: Ի վերջո Ալմաստն ինքնառպահություն և դորժում:

ԵԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ — Ինչպես ասացինք, Ալեքսանդր Սպենդիարյանը Հայրավորություն չի ունեցել սպերայի Փինալը որկեստրովկայի վերածելու և մշակելու: Այդ որատճառով իր սպերայի չորրորդ դործողությունը թույլ է և առնդույն:

Պետական սպերայի դիրքեկտոր Կիմիկ Հովհաննիսյանի առաջարկությամբ և նախաձեռնությամբ սպերայի գեղարվեստական զեկավարությունը (Կիմիկ Հովհաննիսյան, Ա. Բուրզալյան, Պետսնյակով, Գ. Բուրզայյան, Ս. Զարիբյան և Ռ. Թերլեմեզյան) հոկտեմբերի 18-ի իր հերթական նիստում վորոշեց Հետեւյալ ավելացումը կատարել:

Շահի մուտքից հետո, սիմֆոնիկ որկեստրը նվազում և նույն հեղինակի «Յերեանյան ետյուդ ներ»-ից «Ենգելի»-ն իր համիներդահքով միասին, նախերդանքի հնչյունների տակ, Շահի հրամանով համարվում են Թաթուլի պալատի հայ կանայք և պարնում: Ապա միայն յերեսում և Ալմաստն ոչ սկսում են նրան Շահի խոստկությունը, վորը վերջնական մասնությամբ:

